

ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԼԿԱՆ ԿԵԼՆԷԸ ԵՒ ԵՕԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Մասն Ա.



Թարգմանեց ու խմբագրեց՝
ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

ԾԻՍԼՒԻՏՈՒԹԻՒՆ

Մասն Ա.

Ես խաղողի տունկն եմ, դուք՝ ոստերը: Ով մնում է ինձնում եւ ես իր մէջ, շատ պտուղ է բերում, որովհետեւ առանց ինձ ոչինչ չէք կարող անել: ...

Սրանում է փառաւորում Հայրս. ձեր առատ պտղաբերութեամբ (Յվհ 15, 5-8):

Աստծոյ խօսքը, որ հռչակում է Եկեղեցում եւ հրաւիրում է հաւատքի, մեր առջեւ բացայայտում է մի փրկարար ծրագիր: Գոյութիւն ունեցող ամէն բան – տիեզերքը, մարդը, պատմութիւնը, ապագան – ներառնուած է այս ծրագրի մէջ, դէպի իր նպատակակէտն ուղղուած ընթացքը սկսելու համար:

Երբ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը, տեսաւ՝ որ ամէն բան «բարի էր»¹, բայց չունէր ձայն: Կարիքն էր զգացւում մէկի, որը ցոյց տալով արարչութեան ծածուկ իմաստը, կը կարողանար ուղղել այն դէպի Արարիչը, ինչպէս նաեւ գործնական գետնի վրայ կ'աշխատէր վերադարձնել ամբողջ արարչութիւնն իր սկզբնական ակունքին: Ահա այս պատճառով է, որ Ծննդոց գիրքը մարդու արարման պատմութիւնը վերջացնում է՝ ներկայացնելով Աստծուն, որը գոյութիւն ունեցող շնչաւոր եւ անշունչ ամէն էակ յանձնում, վստահում է Ադամին, որպէսզի անուն տայ նրանց եւ իր աշխատանքով նրանց հասցնի իրենց վախճանին:

Աստուածաշնչեան բառապաշարում, ինչ որ մի բանի անուն տալը նշանակում է ճանաչել եւ ընդունել սեփականատէրը եւ սահմանումը, այսինքն՝ թէ տուեալ առարկան կամ էակը ինչ նպատակի է ծառայում: Գոյութիւն ունեցող իրողութիւններն, ուրեմն, պատկանում են մարդուն, եւ նա, ստանձնելով դրանք իր պատմութեան մէջ, պէտք է կարողանայ նրանց տալ Արարչի կողմից կամեցուած իմաստը: Մարդու պարագային, խօսքը վերաբերում է մի յստակ պարտականութեան. գոյութիւն ունեցող ամէն բան ծառայեցնել փառքին եւ գովաբանութեանը Նրա՝ ով ստեղծել է դրանք: Այս պարտականութեան միջոցով, մարդը բացայայտում է՝ որ ինքը նոյնպէս ընթանում է դէպի իր իրական եւ ամբողջական իրագործումը:

Բայց ըմբռնելու համար՝ թէ որն է բոլոր գոյութիւնների, մարդու եւ պատմութեան վերջին նպատակակէտը, որ «ի յաւիտենից ծածկուած է Աստծոյ մտքում»², հարկաւոր է հայել Նրան՝ ով յայտնեց այն եւ լիովին իրագործեց իր մարդկային բնութեամբ. Աստծոյ խօսքը կամ Աստծոյ Որդին, որի միջոցով ստեղծուեց ամէն բան, Նա ինքը նոյնպէս մարմնացաւ, որպէս կատարեալ Մարդ իրականացնելու համար մարդկութեան փրկութիւնը եւ տիեզերական հաշտութիւնն ու վերամիաւորումը: Տէրը մարդկային պատմութեան վախճանն է, պատմութեան եւ քաղաքակրթութեան իղձերի առանցքը, մարդկութեան կենտրոնը:

Աստուած, մարմնանալով, մարդուն միացրեց իրեն, տարածքի եւ ժամանակի մէջ նրա ունեցած յարաբերութիւնների ամբողջ աշխարհի հետ միասին, իմաստաւորեց մարդկութեան պատմութեան ամբողջ ընթացքը, նրա վերջնական կատարելութիւնը, որը լիովին համապատասխանում է սիրոյ իր ծրագրերին. «Բովանդակել ամէն բան ի Քրիստոս, լինի երկնային՝ թէ երկրային իրողութիւնները»³:

¹ Ծնն 1, 10

² Եփս 3, 9

³ Եփս 1, 10

Եկեղեցու հայրախօսական աւանդութիւնը յստակ կերպով ընդգծում է այն նոր իմաստը, որ Աստուած, մարդանալով, տուեց ստեղծուած գոյութիւններին եւ մարդկային ամբողջ պատմութեանը, կատարելով մի նոր արարչագործութիւն: Մարմինը, որ Աստուած ընտրեց եւ ընդունեց, որի միջոցով ամէն ինչում նման դարձաւ մեզ Քրիստոսի անձում, փրկութեան մեծագոյն նշանն է եւ միաժամանակ՝ գործիքը (այսինքն՝ խորհուրդը):

Խորհուրդը եւ խորհուրդները

Mysterion (միսթէրիոն = խորհուրդ) յունարէն բառը արեւմտեան եզրաբանութեան կողմից թարգմանուել է երկու եզրերով, որոնք առաւել յստակ են դարձնում արտայայտուելիք գաղափարները: Դրանք են *mysterium* (միսթէրիոն) եւ *sacramentum* (սաքրամէնթում) բառերը, որոնք երկուսն էլ հայերէնում թարգմանուած են միեւնոյն խորհուրդ բառով: Վերջնական մեկնաբանմամբ, «sacramentum» եզրը ճշգրտօրէն արտայայտում է փրկութեան ծածուկ իրականութեան Գեորգի Երեմիայի նշանը, ծածուկ իրականութիւն՝ որը մատնանշում է «mysterium» եզրով: Այս իմաստով, Քրիստոս ինքը փրկութեան խորհուրդն է (mysterium). «Քրիստոսից բացի ուրիշ աստուածային խորհուրդ չկայ»⁴: Իր սուրբ եւ սրբարար մարդկութեան փրկիչ գործունէութիւնը փրկութեան խորհուրդն է (sacramentum), որ բացայայտում եւ ներգործում է Եկեղեցու եօթ խորհուրդներին (sacramentum) միջոցով: Այս եօթ խորհուրդները այն նշաններն ու Գործիքներն են, որոնց միջոցով Սուրբ Հոգին սփռում է Քրիստոսի շնորհը, որ Գլուխն է, Եկեղեցու վրայ, որ Նրա Մարմինն է: Եկեղեցին, հետեւաբար, պարունակում եւ հաղորդում է անտեսանելի շնորհը, որի խորհրդապատկերն է ինքը: Այս համեմատական իմաստով է, որ Եկեղեցին անուանում է խորհուրդ (sacramentum):

Քանի որ այս երկու եզրերը հայերէնում թարգմանում են միեւնոյն խորհուրդ բառով, սոյն գրքում մեծատառով (Խորհուրդ) թարգմանում ենք «Mysterium», իսկ փոքրատառով (խորհուրդ) «Sacramentum» եզրերը:

Եկեղեցին Քրիստոսի մէջ է որպէս խորհուրդ, այսինքն՝ Աստուծոյ հետ սերտ միութեան եւ ամբողջ մարդկութեան միութեան նշան եւ Գործիք: Լինել Աստուծոյ հետ մարդկանց սերտ միութեան խորհուրդը. ահա՛ Եկեղեցու գոյութեան առաջին իմաստը: Քանի որ մարդկանց միջեւ հաղորդակցութիւնը հիմնում է Աստուծոյ հետ միութեան վրայ, Եկեղեցին նաեւ ամբողջ մարդկութեան միութեան խորհուրդն է: Այդ միութիւնը Եկեղեցու մէջ արդէն իսկ սկսուել է, որովհետեւ նա իր մէջ միաւորում է մարդիկ «բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից ու լեզուներից»⁵: Միաժամանակ, Եկեղեցին նշանն ու Գործիքն է այս միութեան ապագայ լիովին իրականացման:

Որպէս խորհուրդ, Եկեղեցին Քրիստոսի գործիքն է: Նրա ձեռքերում, գործիքն է բոլորի փրկութեան, խորհուրդն է համաշխարհային փրկութեան, որի միջոցով Քրիստոս քօղազերծում եւ միաժամանակ իրագործում է մարդու նկատմամբ Աստուծոյ սիրոյ խորհուրդը: Եկեղեցին մարդկութեան նկատմամբ Աստուծոյ սիրոյ տեսանելի ծրագիրն է, մի ծրագիր՝ որ կամենում է ամբողջ մարդկութիւնը կարգել որպէս Աստուծոյ մէկ ժողովուրդ, միաւորել Քրիստոսի մէկ Մարմնի մէջ, կառուցել որպէս Սուրբ Հոգու մէկ տաճար:

⁴ Սբ. Օգոստինոս, *Epistula* 187, 11, 34.

⁵ Յյտ 7, 9

Յիսուս՝ Հօր խորհուրդն է

Աստծոյ Որդին, որի միջոցով ստեղծուեց ամէն բան, մեր մօտ, մեր պատմութիւնից եւ արարչութեան պատմութիւնից ներս իջաւ որպէս մարդու Որդի:

Իր մարդկութիւնը երկնային իրականութիւնների յայտարար նշանն է: Նրանում, միմիայն Նրանում է Հայրը բացայայտուում. «Ով տեսաւ ինձ, տեսաւ Հօրը»⁶: Աստուծն ոչ ոք երբեք է չի տեսել: Աստծոյ Խօսքը, Նա՝ որ «ծնուել է բոլոր արարածներից առաջ»⁷, բնակուեց մեր մէջ, մեր մէջ դարձաւ պատկերը – Գեօրգիւնի Կաղարկուեց – անտեսանելի Աստծոյ: Նրան լսեցինք մեր ականջներով եւ տեսանք մեր աչքերով, դիտեցինք Նրան եւ շօշափեցինք մեր ձեռքերով⁸:

Յիսուսի անձում, Աստուած Հանդիպում է մարդու հետ եւ մարդը Աստծոյ մէջ վերագտնում է իր ինքնութիւնը: Ծնունդից մինչեւ մահը տարածուող մարդկային գոյութեան ամէնօրեայ արարքներն իր կեանքում ներկայանում են որպէս փրկութեան պահեր: Ամենասովորական փորձառութիւնները – ինչպիսիք են, օրինակի համար, ազգականների կամ մտերիմների հետ սեղանակցութիւնը, ամուսնական ճաշկերոյթը – Յիսուսի ներկայութեան շնորհիւ դառնում են Աստծոյ կերպարանափոխիչ զօրութեան արդիւնաւէտ նշաններն ու գործիքները:

Բայց այն ամէնը՝ որ յարաբերութեան մէջ է մտնում Քրիստոսի հետ, Նրա կողմից կերպարանափոխուում է, մինչեւ իսկ մահը. «Ո՞ւր է, մահ, յաղթութիւնդ: Ո՞ւր է, մահ, խայթոցդ: ... Երախտագիտութիւն թող յայտնուի Աստծուն, որ յաղթանակ է պարգեւում մեզ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհիւ»⁹: Յիսուսի անձում, մահը՝ ոչնչացման ու անարգանքի նշանը վերածուում է փառքի նշանի. ներկայանում է որպէս անապական կեանքի սեմ:

Յիսուսի պատմական գոյութեան, այսինքն՝ երկրի վրայ ապրուած տարիների իւրաքանչիւր վայրկեանը կողմնորոշուած է եւ իր գագաթնակէտին է հասնում Նրա յարութեան Զատիկի մէջ: Յարութեամբ, յարուցեալ Քրիստոսը, Հոգու կողմից՝ վերանորոգուած իր մարդկութեան միջոցով, նոր կեանք է պարգեւում բոլոր նրանց՝ ովքեր հաւատալով մօտենում են իրեն եւ դառնում են իր աշակերտները: Յարուցեալ Քրիստոսի անձում, կերպարանափոխուած եւ վերանորոգուած մարդը գտնում է դէպի Հայրն ուղղուած ճանապարհը: Եւ փրկագործութիւնն, այսպիսով, ի կատար է ածուում:

Եկեղեցին Քրիստոսի խորհուրդն է

Քրիստոսի իմաստութիւնն ու սէրը – այժմ, երբ Նա այլեւս մեր մէջ չէ տեսանելի կերպով – ընտրել եւ ընդունել են մէկ ա՛յլ մարմին, միշտ մեր մօտ մնալու համար. Եկեղեցին, որի ներսում Յարուցեալը ապրում է եւ ներկայ դառնում: Եկեղեցին, այսինքն՝ Քրիստոսին պատուաստուած հաւատացեալների հաւաքը, որի ներսում Նա շարունակում է իր Մարդեղութեան Խորհուրդը (mysterium), իր խորհուրդն է (sacramentum): Եկեղեցում, իր Հոգու զօրութեամբ, Քրիստոս հանդիպում է մեզ եւ երկխօսութեան մէջ է մտնում մեզնից իւրաքանչիւրի հետ, հաղորդելով մեզ իր շնորհը:

Չկայ Եկեղեցի առանց Քրիստոսի, բայց եւ ոչ իսկ Քրիստոս՝ առանց Եկեղեցու: Որովհետեւ չկայ գլուխ առանց մարմնի: Առանց Եկեղեցու, որը յարուցեալ Քրիստոսի տեսանելի նշանն է (խորհուրդը), Նա ժամանակի մէջ կը

⁶ Յվհ 14, 9

⁷ Կղս 1, 15

⁸ Հմմտ. 1Յվհ 1, 1

⁹ 1Կր 15, 55-57

մնար որպէս անցեալին պատկանող մարգարէ: Եկեղեցում Նա ներկայանում է այնպէս՝ ինչպէս որ է իրականում. էմմանուէլը, Աստուած մեր հետ:

Եկեղեցին, Քրիստոսի «խորհուրդը», ընդարձակ եւ յստակ կերպով բացատրուել է հայրախօսական աւանդութեան եւ աստուածաբանական քննարկման մէջ: Նրանցում հաստատուում է, որ Աստուած ի մի է հաւաքել բազմութիւնը նրանց՝ ովքեր հաւատքով են հայում Յիսուսին, փրկութեան Հեղինակին եւ միութեան ու խաղաղութեան Ակունքին, եւ այդ հաւաքը կարգել է որպէս իր Եկեղեցին, որպէսզի բոլորի եւ իւրաքանչիւրի համար լինի այս փրկարար միութեան տեսանելի խորհուրդը, այսինքն՝ Աստուծոյ հետ միութեան եւ ամբողջ մարդկութեան միասնականութեան նշանն ու գործիքը:

Ճշմարտութեան մէջ նուիրագործուած, Եկեղեցին պարտաւորուած է թէ՛ պահպանելու հաւատքը եւ աւետարանելու այն, թէ՛ գործելու մարդկային ամենագնահատելի իրավիճակներում, ինչպէս Քրիստոս, արարքներով՝ որոնք արդիւնաւէտ են դառնում Հոգու ներգործութեամբ: Եկեղեցում, Քրիստոս շարունակում է իրեն միացնել մարդկանց, սրբացնել նրանց՝ նորոգելով իր Հոգու պարգեւմամբ, եւ դարձնում է նրանց ընդունակ՝ ստանձնելու եւ կերպարանափոխելու աշխարհը:

Եկեղեցու այս խորհրդական գործունէութեան կենտրոնում հաւատացեալներին հաղորդութիւնն է Քրիստոսի գատկական Խորհուրդին. էութարիստիան, այսինքն՝ Գոհաբանութիւնը, կամ Ամենասուրբ Հաղորդութիւնը, Պատարագը: Աստուծոյ ժողովուրդը կազմուում եւ աճում է այն արարքի պարբերական կատարմամբ ու նորոգմամբ, որը սովորեցրել եւ պատուիրել է ինքը Քրիստոս. «Սա իմ մարմինն է, որ նուիրում է ձեր համար. արէ՛ք սա իմ յիշատակի համար»¹⁰:

Գոհանաբական Պատարագի ընթացքում, Եկեղեցին վերցնում է Քրիստոսին եւ Նրան իսկապէս հաղորդում է մարդկանց, վերջիններիս մասնակից դարձնելով Նրա մահուանն ու յարութեանը: Այս արարքում, որը Քրիստոս առաջին անգամ կատարեց եւ որը Եկեղեցին հաւատարմօրէն կրկնում է, նշմարում է վերջին նպատակակէտը՝ որին հասնելու է հրաւիրուել ամբողջ արարչութիւնը. փրկուել եւ մէկ միակ իրականութիւն դառնալ Քրիստոսի մարմնի եւ արեան մէջ, Հոգու ներգործութեամբ, ընծայուելու համար Հօրը, գոհաբանութեան մատուցմամբ եւ օրհնութիւնների երգով:

Չատկական մէկ եւ միակ Խորհուրդից է բխում այն՝ ինչը որ Եկեղեցին ասում եւ անում է Քրիստոսի անունով: Եւ այսպէս յառաջ են գալիս եօթ խորհուրդները, որոնց վերաբերեալ Եկեղեցին դաւանում է՝ որ արդիւնքն են իր Տիրոջ կամքի:

Քրիստոս Ինչն է գործում Եկեղեցում

Խորհուրդներում, Քրիստոս մեր համար այժմէական է դարձնում Փրկութեան Խորհուրդը, որը բացայայտել էր իր կեանքի գլխաւոր հանգրուաններում: Այսպիսով, Նա ժամանակակից է դառնում իւրաքանչիւր մարդու եւ իւրաքանչիւր սերունդի. եւ մարդկանց մասնակից է դարձնում, Եկեղեցու պաշտօնէութեան միջոցով, իր ծնունդին, իր առաքելութեանը, իր մահուանն ու յարութեանը:

Ինչպէս որ Քրիստոս եղաւ Հօր տեսանելի նշանը (խորհուրդը), ընդմէջ իր կեանքի բոլոր իրադարձութիւններին ու դէպքերի, որոնք իրենց գազաթնակէտին հասան գատկական օրերին, նմանապէս Եկեղեցին Քրիստոսի կողմից կարգուել է որպէս իր տեսանելի նշանը, ընդմէջ եօթ խորհուրդների, որոնք իրենց գազաթնակէտին են հասնում Գոհաբանական Պատարագի մէջ:

Քրիստոսի եւ իր Հոգու գործունէ ներկայութիւնը շարունակուում է Եկեղեցու խորհրդակատար գործունէութեան մէջ: Երբ խորհրդակատար պաշտօնեան մկրտում է, Քրիստոս ինքն է՝ որ մկրտում է. Քրիստոս ինքն է նոյն պաշտօնեայի ձեռքով

¹⁰ Ղկս 22, 19

հաւատքի մէջ զօրացնում դրոշմուածներին. երբ պատարագիչ քահանան հացը եւ գինին օրհնում է՝ դարձնելու համար Քրիստոսի մարմինն ու արիւնը, Քրիստոս ինքն է՝ որ սրբագործում է. Քրիստոս, դաշինքի մէջ՝ որ այր ու կին կնքում են Ամուսնութեան խորհուրդով, իր անձը դնում է որպէս հաղորդակցութեան եւ հաւատարմութեան կնիք եւ գրաւական. Քրիստոս ինքն է թեկնածուին ձեռնադրում խորհրդակատար պաշտօնէութեան (քահանայութեան), երբ եպիսկոպոսը ձեռնադրում է նրան. Քրիստոս, Եկեղեցու խորհրդակատար պաշտօնեայի միջոցով, ներում է մեղքերը եւ մեղաւորներին հաշտեցնում է Հօր հետ. օծում է հիւանդի մարմինը, մխիթարում է նրան եւ տալիս է Հոգու զօրութիւնը:

Այսինքն՝ Քրիստոս ինքն է Եկեղեցու խորհուրդների գլխաւոր պաշտօնեան: Խորհրդակատար պաշտօնեաները, մասնակցելով իր շնորհին եւ իր իշխանութեանը, տեսանելի են դարձնում իր ներգործութիւնը յանուն իր:

Եկեղեցին եօթ խորհուրդների մէջ ճանաչում է իրեն Քրիստոսի հետ հանդիպման տանող գլխաւոր արարքները: Առաջին դարերից սկսած, Եկեղեցին այս արարողութիւնները ծիսակատարել է հանդիսաւորութեամբ, հոգեւոր եւ մշակութային բարձր արժէք ներկայացնող աղօթքներով ու շարականներով: Արարողութեանը ընկերացող խօսքերը, արարքներն ու նշանները ծանրաբեռնուած են փրկարար իմաստով, որը յիշեցնում եւ հաւատքի մէջ այժմէականացնում է Աստուծոյ կողմից իր ժողովուրդի պատմութեան ընթացքում կատարած գործերը. Քրիստոսի երկրային կեանքի հանգրուանները եւ յատկապէս Նրա մահն ու յարութիւնը, շնորհի Խորհուրդը՝ որ խորհուրդներից իւրաքանչիւրը վերանորոգում է:

Այս հարստութեանը չի հակասում նիւթական տարրերի պարզութիւնն ու աղքատութիւնը. հեղուած մի քանի ափ ջուր, մի քիչ հաց եւ մի քիչ գինի, մի քանի կաթիլ ձէթ: Այս խոնարհ տարրերը («խորհուրդի նիւթը», ինչպէս սովորաբար անուանում են), միանալով խօսքին («խորհուրդի կերպին»), տեսանելի եւ իրական կերպով բացայայտում են Քրիստոսի ներգործութիւնը եւ դառնում են արդիւնաւէտ նշաններ, որոնց միջոցով Սուրբ Հոգին հաղորդակցութեան մէջ է մտնում իր արարածների հետ եւ փրկում է նրանց:

Կարող է զարմանք պատճառել, որ այսքա՛ն պարզ ու սովորական իրականութիւնները կարող են դառնալ Հոգու գործիքները: Բայց Տերտուղիանոսն արդէն ասել է. «Մարմինը փրկութեան գազաթնակէտն է»¹¹: Ուստի, խորհուրդների մէջ Քրիստոսի ներգործութիւնը ստանձնում, մաքրագործում եւ կերպարանափոխում է մարդուն, մարդկային յարաբերութիւնների եւ ամբողջ պատմութեան ընդարձակ եւ բարդ հիւսուածքի հետ միասին:

Քրիստոսի մէջ կերպարանափոխում

Եկեղեցին խորհուրդները կատարում է միմիայն Քրիստոսից եւ Սուրբ Հոգուց ստացած զօրութեան իշխանութեամբ: Խորհուրդը կայանում է Աստուծոյ կերպարանափոխիչ ներգործութեան մէջ, որն ազդում եւ գործում է Եկեղեցու մէջ: Ազդում է հաւատքի մէջ եւ հաւատքի միջոցով: Առանց հաւատքի չկայ խորհուրդ. նախեւառաջ Եկեղեցու հաւատքը, որպէս անհրաժեշտ պայման՝ որպէսզի խորհուրդը վաւերական լինի. ապա նաեւ խորհուրդն ընդունողների հաւատքը, որպէսզի ծիսական արարողութիւնը յետագայում պողպատի կեանքում:

Խորհուրդն ինքնըստինքեան անպտուղ է, եթէ մարդը չի պատասխանում ստացած շնորհին եւ այդ շնորհը չի իւրացնում գիտակից, պատասխանատու եւ գործի վերածուած հաւատքով, հաւատք՝ որ պէտք է մաքրագործուի, հասունանայ եւ աճի:

¹¹ Տերտուղիանոս, *La resurrezione dei morti*, 8, 2.

Բայց բոլոր խորհուրդները անձի նկատմամբ չունեն միեկնոյն արդիւնքը: Մկրտութիւնը, Դրոշմը եւ Ձեռնադրութիւնը քրիստոնեայի նուիրագործում են՝ վերապրելու Քրիստոսին՝ սեփական գոյութեան ամբողջութեան մէջ, աշխարհի առջեւ վկայութեամբ, «ձեռնադրուած» (սարկաւազութիւն, քահանայութիւն, եպիսկոպոսութիւն) եւ «ոչ ձեռնադրուած» (աշխարհական հաւատացեալները եւ վանականները) պաշտօնէութեան իւրայատուկ պարտականութիւններէց ներս, Եկեղեցու շինութեան համար:

Խօսքը վերաբերուած է Քրիստոսի հետեւորդութեանը ընդունակ դառնալուն, որը յատուկ եւ մնայուն ընդունակութիւն է եւ փոխում է մկրտուած ու դրոշմուած եւ ձեռնադրուած անձի ինքնութիւնն ու գործունէութիւնը, եւ այս պատճառով է ասուում՝ որ այս երեք խորհուրդները դրոշմում են մի անջնջելի կնիք եւ չեն կարող կրկնուել: Քրիստոնեաներ (մկրտուածներ), ճանաչուած վկաներ (դրոշմուածներ) եւ խորհրդակատար պաշտօնեաներ (ձեռնադրուածներ) դառնում ենք մէկ անգամ ընդ միշտ, իրաւունքներով եւ պարտականութիւններով՝ որոնք ընդգրկում են ամբողջ կեանքը:

Հաւատքով ընդունուած խորհուրդների շնորհիւ՝ մարդու կեանքը եւ մարդկանց ու առարկաների հետ նրա բոլոր յարաբերութիւնները մասնակցում են Քրիստոսի մահուանն ու յարութեանը: Քրիստոսի կողմից ստանձնուած, զօրացում եւ բժշկուած են՝ ծառայելու համար Արքայութեան հաստատմանը:

Այսպիսով, մեռնում է «հին մարդը» եւ յարութիւն է առնում «նոր մարդը», եւ ամբողջ կեանքը կերպարանափոխում է:

Եկեղեցու խորհուրդների միջոցով, հաւատացեալը առաջնորդուած է քայլ առ քայլ բացայայտելու Քրիստոսին եւ, Նրան ընծայուած, պատկանելու Նրան, նմանուելու Նրան, կերպարանակից դառնալու Նրան միշտ աւելի, մինչեւ որ կը կարողանայ ասել. «Այլեւս ես չեմ՝ որ ապրում եմ, այլ Քրիստոս ինքն է ապրում իմ մէջ»¹²:

Մարդու եւ իր ամբողջ կեանքի այս կերպարանափոխումը տեղի չի ունենում միայն այն պահին՝ որում ծիսակատարում է խորհուրդը, այլ շարունակում է իր պտուղներն արդիւնաւորել հաւատացեալի ամբողջ կեանքի ընթացքում: Ծիսական արարողութիւնը տեւում է մի քանի ըրպէ, բայց մի արարք է՝ որ այլեւս չի հանգում: Կենդանի ջրի աղբիւրի նման, որն առաջին անգամ լինելով բխում է անապատացած հողից եւ այդ պահից սկսած՝ ալիքը չի դադարում հոսելուց, շնորհը նոյնպէս չի դադարում բխել խորհուրդից: Միմիայն մեղքն է խոչընդոտում աստուածային կեանքի աճին եւ խորհուրդի տեւական պտղաբերութեանը:

Բոլոր խորհուրդները միանում են միմեանց եւ պարունակում Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդի մէջ: Նրանցից մէկը սերտ յարաբերութեան մէջ է միւսի հետ, որովհետեւ մէկ է Քրիստոս եւ մէկ է Հոգին, որ ներգործում են նրանցում, եւ մէկ միակ է նոր կեանքը՝ որ պարզեւում են:

Խորհրդական շնորհի արդիւնաւէտութիւնը չի ազդում միմիայն այն հաւատացեալի վրայ, որը հաւատքով ընդունում է տուեալ խորհուրդը, այլ հեղում է ամբողջ հասարակութեան վրայ, հարստացնելով նրան: Այս պատճառով կարելի է նաեւ հաստատել՝ որ Եկեղեցին, ծիսակատարելով խորհուրդները, շարունակաբար վերանորոգում եւ զօրանում է նրանց միջոցով:

Խորհրդակատար իւրաքանչիւր արարողութիւն, ուրեմն, հաւատացեալի եւ ամբողջ հասարակութեան համար մէկն է աճի ու հասունացման այն հանգրուաններից, որոնք իրենց առաջնորդում են դէպի ամբողջական հասունութիւնը կատարեալ մարդու, որ է Քրիստոս Յիսուս:

Այսպիսով, Աստուծոյ խօսքի կողմից արթնացուած հաւատքը, յաւելեալ աճ ստանալով խորհուրդների ծիսակատարութեամբ, ձգտում է լիովին արտայայտուելու կեանքի վկայութեան մէջ: Աստուծոյ խօսքը եւ խորհուրդները, հաւատքը եւ ամէնօրեայ կեանքը քրիստոնեայի համար կազմում են մի անքակտելի հանգոյց,

¹² Գղտ 2, 20

որը, գործուն սիրոյ շնորհիւ, նրան դարձնում է մարդկանց մէջ Աստուծոյ փրկարար ներգործութեան տեսանելի նշանը լինելուն ընդունակ եւ կարող:

«Մենք միացած ենք Քրիստոսին. Քրիստոս անբաժանելի է Հօրից. եւ Հօրը միացած մնալով հանդերձ, միացած է նաեւ մեզ: Այսպէս ենք հասնում Հօր հետ միութեանը: Քրիստոս միացած է Հօրը, որովհետեւ ծնուած է նրանից. միացած է նաեւ մեզ, որովհետեւ մեր հետ բնութենակից է: Մենք ապրում ենք Իր մարդկային բնութեան շնորհիւ, այնպէս՝ ինչպէս Ինքն ապրում է Հօր զօրութեամբ»¹³:

¹³ Սբ. Իլարիոս, *Sulla Trinità*, 8, 13-16.

ՀԱՒԱՏԱՄՔ

Հաւատում ենք մէկ Աստուծոյ, Ամենակալ Հօրը, երկնքի եւ երկրի, տեսանելիների ու անտեսանելիների Արարչին:

Եւ մէկ Տիրոջ, Յիսուս Քրիստոսին, Աստուծոյ Որդուն, Հայր Աստուծոց ծնուած՝ Միածին, այսինքն՝ Հօր էութիւնից: Աստուած՝ Աստուծոց, Լոյս՝ Լոյսից, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստուծոց, ծնունդ՝ ո՛չ թէ արարած: Նոյն Ինքն Հօր Բնութիւնից. որի միջոցով ամէն բան ստեղծուեց երկնքում եւ երկրի վրայ, տեսանելիներն ու անտեսանելիները: Նա մեր՝ մարդկանցս եւ մեր փրկութեան համար իջաւ երկնքից, մարմնացաւ, մարդացաւ, որպէս կատարեալ մարդ ծնուեց Սուրբ Կոյս Մարիամից, Սուրբ Հոգու ներգործութեամբ: Որից առաւ մարմին, հոգի եւ միտք, եւ այն ամէնը՝ որ յատուկ է մարդկային բնութեանը, իսկապէս եւ ո՛չ թէ երեւութապէս: Չարհարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով համբարձաւ երկինք, նստեց Հօր աջ կողմը: Գալու է նոյն մարմնով եւ Հօր փառքով, դատելու է ողջերին եւ ննջեցեալներին, եւ Նրա թագաւորութիւնը վախճան չի ունենալու:

Հաւատում ենք անեղ եւ կատարեալ Սուրբ Հոգուն, որ խօսեց Օրէնքի, Մարգարէների ու Աւետարանների միջոցով. որ իջաւ Յորդանան, քարոզեց Առաքեալների բերանով եւ բնակուեց Սրբերի մէջ:

Հաւատում ենք նաեւ մէկ միակ, ընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցուն. մէկ մկրտութեան՝ մեղքերի ապաշխարութեան, քաւութեան եւ թողութեան համար. ննջեցեալների յարութեանը, հոգիների ու մարմինների յաւիտենական դատաստանին, երկնքի արքայութեանն ու յաւիտենական կեանքին:

Ամէն:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒՄԸ

Հաւատքի Հանգանակում, Եկեղեցին դաւանում է Ամենասուրբ Երրորդութեան Խորհուրդը եւ Նրա «բարեացական ծրագիրը»¹⁴ ամբողջ արարչութեան վերաբերեալ. Հայրը «Իր կամքի Խորհուրդը» կատարում է՝ տալով Իր սիրեցեալ Որդին եւ Իր Սուրբ Հոգին աշխարհի փրկութեան եւ Իր անուան փառքի համար: Սա՛ է Քրիստոսի Խորհուրդը¹⁵, որ պատմութեան մէջ բացայայտում եւ իրագործում է ըստ նախապէս պատրաստուած ծրագրերի, իմաստնագոյն կերպով կազմակերպուած «տնօրինման», որը Պօղոս Առաքեալը անուանում է «Խորհուրդի Տնտեսութիւն [oikonomia]»¹⁶ եւ որը Սուրբ Հայրերի աւանդութիւնը կոչում է «մարդացած Խօսքի Տնտեսութիւն» կամ «փրկութեան տնտեսութիւն»:

Մարդու փրկութեան եւ Աստծոյ կատարեալ փառաւորման այս գործը, որ սկսուել էր Հին Կտակարանի ժողովուրդի մէջ կատարուած աստուածային հրաշագործութիւններով, իրագործուեց Քրիստոս Տիրոջ կողմից, յատկապէս Իր սրբազնասուրբ Չարչարանքների, մեռելներից Յարութեան եւ փառահեղ Համբարձման գատկական Խորհուրդի միջոցով, մի Խորհուրդ՝ ըստ որի «մեռնելով կործանեց մեր մահը եւ յարութիւն առնելով տուեց մեզ կեանք»: Խաչի վրայ մահացած Քրիստոսի կողից բխեց ամբողջ Եկեղեցու զարմանահրաշ Խորհուրդը:

Այս իսկ պատճառով, Ծէսի մէջ Եկեղեցին տօնախմբում է գլխաւորապէս գատկական Խորհուրդը, որի միջոցով Քրիստոս ի կատար ածեց մեր փրկութեան գործը: Քրիստոսի այս Խորհուրդը Եկեղեցին աւետում եւ տօնակատարում է իր Ծէսի մէջ, որպէսզի հաւատացեալներն ապրեն այն եւ վկայեն աշխարհում:

«Ծէս» (Liturgia) եզրը իր սկզբնական իմաստով նշանակում է «հասարակաց գործ», «ժողովուրդի կողմից/ժողովուրդին ի նպաստ մատուցուած ծառայութիւն»:
Քրիստոնէական աւանդութեան մէջ, նշանակում է՝ որ Աստծոյ ժողովուրդը մասնակցում է «Աստծոյ գործին»¹⁷: Ծէսի միջոցով, Քրիստոս, մեր Փրկիչն ու Քահանայապետը, Իր Եկեղեցու մէջ, Եկեղեցու հետ եւ Եկեղեցու միջոցով շարունակում է մեր փրկութեան գործը:

«Ծէս» եզրը Նոր Կտակարանում գործածուել է ներկայացնելու համար ոչ միայն աստուածային պաշտամունքը¹⁸, այլ նաեւ Աւետարանի քարոզութիւնը¹⁹ եւ գործի վերածուած սէրը²⁰: Բոլոր այս դէպքերում, խօսքը վերաբերում է Աստծուն եւ մարդկանց մատուցուած ծառայութեանը: Ծիսակատարութեան մէջ, Եկեղեցին ծառայում է, իր Տիրոջ՝ միակ «Ծիսակատար»ի²¹ նմանութեամբ, որովհետեւ մասնակցում է Նրա մարգարէական (աւետում) եւ թագաւորական (սիրոյ ծառայութիւն) քահանայութեանը (պաշտամունք):

Լինելով Քրիստոսի գործը, Ծէսը գործն է նաեւ Նրա Եկեղեցու: Ծէսը իրագործում է Եկեղեցին եւ այն բացայայտում է որպէս Քրիստոսի շնորհիւ Աստծոյ եւ մարդկանց Հաղորդակցութեան տեսանելի նշան: Հաւատացեալներին

¹⁴ Եփս 1, 9

¹⁵ Հմմտ. Եփս 3, 4

¹⁶ Եփս 3, 9

¹⁷ Հմմտ. Յվհ 17, 4

¹⁸ Հմմտ. Գրծ 13, 2; Ղկս 1, 23

¹⁹ Հմմտ. Հռմ 15, 16; Փլպ 2, 14-17. 30

²⁰ Հմմտ. Հռմ 15, 27; 2Կր 9, 12; Փլպ 2, 25

²¹ Հմմտ. Եբր 8, 2. 6

պարտաւորեցնում է ապրել ընդհանուր նոր կեանքը: Պահանջում է, որ հաւատացեալները մասնակցեն նրան գիտակից, գործունե եւ պտղաւատ կերպով:

Սրբազան Ծէսը, սակայն, Եկեղեցու միակ գործունէութիւնը չէ: Պէտք է յաջորդի աւետարանմանը, հաւատքին եւ դարձին: Այդ դէպքում է միայն ի զօրու՝ պտղաբերելու հաւատացեալների կեանքում. ըստ Հոգու նոր կեանքը, Եկեղեցու առաքելական եռանդը եւ նրա միութեան ծառայութիւնը:

Ծէսը նաեւ մասնակցութիւն է Քրիստոսի աղօթքին, որն ուղղուած է Հօրը ընդմէջ Սուրբ Հոգու: Ծէսի մէջ, քրիստոնէական բոլոր աղօթքները գտնում են իրենց աղբիւրն ու նպատակակէտը: Ծէսի միջոցով, ներքին մարդն արմատանում եւ հիմնւում է²² այն «մեծ սիրոյ վրայ, որով Հայրը սիրում է մեզ»²³ Իր սիրեցեալ Որդու մէջ: Այն՝ ինչը որ ապրւում եւ ներանձնացւում է որեւէ աղօթքով, որեւէ ժամանակում, «Հոգու մէջ»²⁴, Աստծոյ միեւնոյն հրաշագործութիւնն է:

Ծիսական ուսուցումը որպէս նպատակ ունի առաջնորդել դէպի Քրիստոսի խորհուրդը (արդարացիօրէն կոչւում է «խորհրդագիտութիւն», «mystagogia»), յառաջանալով տեսանելիից դէպի անտեսանելին, իմաստաւորողից՝ իմաստաւորուածը, «նշաններից ու գործիքներից» (sacramentum) դէպի «խորհուրդները» (mysterium): Սոյն գրքում նախ կը ներկայացնենք այն՝ ինչը որ Ծէսի վերաբերեալ հիմնական եւ ընդհանուր է ամբողջ Եկեղեցում, որպէս Խորհուրդ եւ որպէս ծիսակատարութիւն (Մասն Առաջին), ապա եօթ խորհուրդներն ու խորհրդանմանները (Մասն Երկրորդ):



²² Հմմտ. Եփս 3, 16-17

²³ Եփս 2, 4

²⁴ Եփս 6, 18